«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Տարբերակված ուսուցման կիրառումն ու արդյունավետությունը

Առարկան՝Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Նարինե Ազարյան

Ուսումնական հաստատություն՝Ֆանտանի միջնակարգ դպրոց

ԹԵՄԱ՝ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցիչ՝ Նարինե Ազարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
   2.1 Թվային տեխնոլոգիաները և ստեղծագործականությունը տարբերակված ուսուցման գործընթացում
   2.2 Ստեղծագործությունն ուսումնառության մեջ
   2.3 Մոտիվացիա
   2.4 Վերլուծական դասավանդման դերը տարբերակված ուսուցման Գործընթացում

ԻՆՉՊԵՍ Է ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՒՄ Հայոց լեզու և գրականություն ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆՄԱՆԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

   4.1 Ներածություն
   4.2 Փորձարարական հետազոտության համատեքստ
   4.3 Փորձարարական դասեր 7 -րդ դասարան

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


ՆՊԱՏԱԿՆԵՐ
ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐ
ՑԱԾՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Առանց ցանկության սովորող աշակերտը նման է թևեր չունեցող թռչունի

Սաադի

Մարդը ծնված օրից ևեթ սկսում է ուսումնասիրել իր շրջապատը , կատարում է պրպտումներ, կարողանում է որոշ բաներ իր և շրջապատի համար բացահայտել, կատարում է եզրահանգումներ: Իր կյանքի ողջ գործունեության ընթացքում մարդը ձեռք է բերում գիտելիքներ , որոնք օգնում են նրան կյանքում դրսևորել այս կամ այն առումներով:

Գիտելիքը գանձ է , զրահ է բոլոր դժվարությունների դեմ, այն մարդուն դարձնում է ազատ և մեծ :Գիտելիքն ու հզորությունը նույն բանն են /Բեկոն, Ֆուլեր,Ռուդաքի և այլոք/ :

Ինչպես ասում է Թովմաս Ֆուլերը գիտելիքի բանալին փորձն է,իսկ փորձը ձեռք է բերվում տարիների քրտնաջան աշխատանքով :Ասել է թե ժամանակն ամենամեծ ուսուցիչն է մարդու կյանքում : Իսկ ո՞վ է այդ դեպքում Մարդ ուսուցիչը ,ի՞նչ կարևոր առաքելություն ունի նա:

Երբ ետ ենք նայում դեպի դարերի խորքը , տեսնում ենք ուսուցիչի դերը անհատի և հասարակության ձևավորման գործում: Ուսուցիչը , որին անվանում էին մտածող, իմաստուն, ռաբբի , գուրու և այլն , համարվել է Աստծուն հավասար:

Բայց հիշենք նաև այնպիսի դեպքեր, երբ աշխարհի մի քանի տաղանդավոր մարդիկ. Չարլզ Դարվին, Պատրիկ Հենրի, Իսահակ Նյուտոն, Կյուրի, Լուի Պաստոր, Ալբերտ Էյնշտեյն, մեր օրերում .Ստիֆ Ջոպս ,Սթիվեն Հոքինգ խրախուսվեցին հեռանալ դպրոցից, որպես սովորելու համար անկարողունակ:Նրանց կողքին բարեբախտաբար հայտվեցին ուսուցիչներ, ովքեր հարգեցին այն գաղափարը , որ տարբեր աշակերտներ պետք է սովորեն տարբեր ձևերով, տարբերակված մեթոդներով:
Աշխատելուս տարիներին ինձ համար բացահայտում արեցի. գալիս էին սովորողներ , որոնք քիչ գիտելիքներ ունեին մայրենիից: Դպրոցն ավարտելու վերջին տարին նրանց մոտ գրանցվում էր առաջադիմության ակնհայտ աճ: Նրանք իրենց առաջադիմությամբ անցնում էին «բարձր առաջադիմություն » ունեցող սովորողներին , շատերն ընդունվում էին անվճար ԲՈՒՀ: Ես հասկացա, որ « թույլ» ,«ուժեղ» , «միջակ» խոսքերը խիստ հարաբերական արտահայտություններ են: Հասկանալի էր , որ այդ աճը ուներ հոգեբանական , ֆիզիոլոգիական, դասավանդման ավելի հմուտ մոտիվացիա :

Ինձ միշտ մտահոգել է դասարանում տարբեր աշակերտների հետ արդյունավետ ուսուցում իրականացնելը, քանի որ ինչպես նշել էի, սխալ է «ուժեղ», «թույլ», «միջակ» աշակերտ հասկացությունները: Ես իմ առջև խնդիր դրեցի հետազոտական աշխատանքը կատարել հենց «տարբերակման ուսուցմամբ դասավանդումը» թեմայի շուրջ:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթության արամտները դառն են, բայց պտուղը քաղցր է:

Արիստոտել

Տարբեր փաստերն ու վկայություններն ապացուցում են , որ ավանդական ուսուցումը իսկապես չի կարող նպաստել լիարժեք, արդյունավետ ուսումնառությանը:

Հանի Մորգանը իր հոդվածում, անդրադառնում է այն փաստին, որ ավանդական դպրոցները սովորաբար ընդգծում են միայն երկու ուղղություն ՝ մտավոր-ժառանգական, լեզվական եւ տրամաբանական / *HANI MORGAN, 2014* / : Այս պրակտիկան միայն աշխատում է օժտված աշակերտների համար և բացառում է «թույլ սովորող» սովորողներին: Վարժարանում ուսուցումը հենց այդպիսին էր , քանի որ գալիս էին հիմնականում խելացի աշակերտներ , իսկ ուսուցչին մնում էր ավելի ուժեղացնել նրանց:

Ըստ Մորգանի ուսուցիչը /պարոն Ջոնսը / հաջողություններ կգրանցի ,եթե աշակերտին հանձնարարի համատեղ աշխատելու այլ սովորողների հետ , որոնք ավելի առաջադեմ են տվյալ առարկայից: Դրանով օգտագործվում է միջանձնային հարաբերությունները և սովորող - սովորող կապի շնորհիվ ավելի արդյունավետ ուսուցում է ապահովվում/*HANI,MORGAN,2014/*:

Մորգանը նշում է , որ եթե ուսուցիչը օգտագործի Գարդների , Վիգոտսկու և Լևիի մերձակա զարգացման գոտիները , ինչպես նաև Էլլիսի հմտությունների օգտագործման մեթոդները.[բազմաթիվ օրինակների , քայլ առ քայլ վարժանքների միջոցով դասի փորձարկված մոտեցում, որն իր մեջ ներառում է կարեւորագույն երեք հարցեր ՝ ազդեցության չափերի հաշվետվություն եւ մեկնաբանություն (մաս I), վիճակագրական ուժերի վերլուծություն (II մաս) եւ տարբեր ուսումնասիրություններից ստացված ազդեցության չափման գնահատումների մեթա-վերլուծական համակցում (III մաս)] (*PAUL D. ELLIS*, *2010 թ.*) , ապա տարբերակված հարցերի միջոցով կարող է գրանցել բարձր մակարդակի ուսուցում: Աշակերտները միմյանց հետ շփվելով , իրենց սեփական ճանապարհով ավելի բարձր արդյունքներ կգրանցեն : Իրենց սինթետիկ համատեղելիության շնորհիվ սովորողները հաճախ իրենց հասակակիցներից ավելի շատ են հասկանում և սովորում , քան մեծահասակներից / *HANI MORGAN, 2014 /:*

Ես համոզվեցի , որ նմանատիպ աշխատանքն իսկապես նպատակային է , այստեղ գործում է **«սովորում եմ և սովորեցնում »** սկզբունքը: Նման ուսուցումը փոխանցելի է , արդյունավետ , մարտահրավերային , մտաճանաչողական: Ժամանակների ընթացքում փոխվել են դասավանդման մեթոդները , քարացած օրենքներին փոխարինելու են եկել ավելի արդյունավետ, դինամիկ մեթոդներ :Այսօր ավանդական դասավանդումը շատերի համար ձանձրալի է : Շատ աշակերտներ ֆիզիկապես դասին ներկա են, սակայն հոգեբանորեն բացակայում են: Ժամանակը ինքն է թելադրում նոր մեթոդներով աշխատելը , աշխատանքի նոր ոճեր փնտրելը:

Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը կիրականանա, եթե հաշվի առնվի յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները , կատարվի սովորողների խմբավորումներ ըստ այդ առանձնահատկությունների , տրվի հանձնարարություններ , որոնք բավարարեն սովորողների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Նման ուսուցումը հետաքրքիր ու բովանդակալից կլինի դասարանի բոլոր աշակերտների համար:

Ուսուցիչը պետք է սովորողին ժամանակ հատկացնի աշխատանքի կատարման համար ինքնուրույն ուղիներ գտնելու , ընտրություն կատարելու , տարբեր գնահատականներ տալու ուղղությամբ :Այս ռազմավարությունն օգնում է սովորողներին ավելի պատասխանատու դառնալ: Այս գործընթացը ներառում է այն, թե ինչպես ենք մենք դասավանդում և ինչպես են աշակերտները սովորել /*ՀՈԼԻ,Մ.ԼԵՎԻ,2008թ*/:

Ես՝ որպես ուսուցիչ, պետք է ունենամ գործիքներ , որոնցով կարողանամ չափել ,թե

- որտե՞ղ ենք մենք
- ինչպե՞ս կարող ենք ստանալ
- ու՞ր ենք գնում

Սովորողը պետք է իմանա՝

- ի՞նչ ես գիտեմ
- ի՞նչ եմ ուզում իմանալ
- ի՞նչ ես սովորեցի

Տարբերակված ուսուցման համար անհրաժեշտ է

- բովանդակություն,
- գործընթաց
- ապրանք
- ուսումնական միջավայր, /Քարոլ Էնն Թոմլինսոն,1999, Հ. Մ. Լևի,2008 և այլոք/:

ՍՈՎՈՐՈՂԸ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ

- ի՞նչ ես գիտեմ,
- ի՞նչ եմ ուզում իմանալ,
- ի՞նչ Ես սովորեցի:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

- բովանդակություն,
- գործընթաց ,
- ապրանք ,
- ուսումնական միջավայր

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՉԱՓԵԼԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

- որտեղ ենք մենք,
- ինչպես կարող ենք ստանալ
- ուր ենք գնում:

Ըստ Էնն Թոմլինսոնի , ում հետ համամիտ են բոլոր ուսուցիչները, սովորողներն ունեն տարբեր տեսակի մտքեր, և , հետեւաբար, սովորելը, հիշելը, կատարելը և հասկանալը տարբեր ձևերով են ընկալում: Նա պնդում է, որ սովորողները կարող են ավելի լավ կատարել , եթե ուսուցիչները կարողանան սովորել և սովորեցնել մի շարք ձևերով, եւ ուսումը կարող է գնահատվել տարբեր միջոցներով:

Ինչպես Wolfe (2001) պնդում է, տեղեկատվությունը ձեռք է բերվում հինգ զգայարանների՝տեսողություն, հոտ, համ, հպում և ձայնի միջոցով: Այս տեղեկատվությունը վերաբերում է տարբերակմանը, որը կարող է ակտիվացնել բազմաթիվ զգայարաններ եւ դրանով ավելի մեծ ազդեցություն ունենալ ուղեղի վրա: Բացի այդ, Գարդների ուսումնառության բազմակի զարգացման տեսությունը բացահայտեց ութ տարբերակային մոտեցումներ՝ լեզվաբանական, տրամաբանական-մաթեմատիկական, երաժշտական, մարմնական-կինոստետիկ, տարածական, միջանձնային, միջանձնային և բնագետ:Վոլֆի և Գարդների տեսությունները նպաստում են , որ ուսումնառությանն ավելի մեծ թվով սովորողներ ընդգրկվեն , նոր ոճեր ընտրվեն /*Gardner, 1999* /:

Ինչպե՞ս եմ հասկանում տարբերակել բովանդակությունը: Դա կարելի է իրականացնել՝ մշակելով Bloom- ի տաքսոնոմիայի տարբեր բնագավառներին նվիրված սովորողների խմբերի գործունեությունը /Էնն Թոմիլսոն1999/: Օրինակ, այն սովորողները , որոնց համար դժվար ընկալելի է նյութը, կարող են պահանջել լրացնել Բլումի Տաքսոնոմիայի ստորին մակարդակները՝գիտելիքները, հասկացողությունը եւ կիրառումը: Հատուկ վարպետությամբ սովորողները կարող են խնդրել կիրառել առաջադրանքների, վերլուծությունների եւ գնահատման ոլորտներում կատարված առաջադրանքները, և բարձր մակարդակ ունեցող վարպետության բարձրագույն սովորողները կարող են խնդրել գնահատման և սինթեզում կատարելու խնդիրները / Էնն Թոմիլսոն1999/: Նման ձևով աշխատանքը բերում է նրան , որ ուսուցիչը վերջապես հասկանում է , թե ինչ է ուզում սովորողը, ինչպես է հասնում գիտելիքի ձեռք բերմանը, փոխըմբռնման ու հմտությունների կիրառմանը, ուսուցիչը չի տարբերվում սովորողից : Այս ամենը վկայում է այն մասին , որ ուսուցիչը հետզհետե տարբերվում է բովանդակությունկրողից:

«ուսուցիչի հարցն այնպիսին է, ինչպիսին էր 100 տարի առաջ: «Ինչպես կարող եմ բաժանել ժամանակը, ռեսուրսները եւ ինքս, որպեսզի ես իմ բոլոր աշակերտների մեջ տաղանդի առավելագույնս խթանող արդյունավետ կատալիզատոր լինեմ» /Tomlinson, Carol Ann (1999) /:

Գործընթացը տարբերակված ձևով իրականացնելու համար պետք է օրինակելի դասապլան մշակել, հարցումներն ու հանձնարարությունները տալ ըստ սովորողների մակարդակի: խմբերի ստեղծումը պետք է լինի ճկուն , փոփոխվող , հիմնված լինի սովորողների պատրաստակամության, շահերի կամ կարիքների վրա: Այս առումով ինձ հոգեհարազատ է տիկին Սանթոսի տարբերակված դասավանդման մեխանիզմը /*Tomlinson, Carol Ann, 2001* /: *Թոմիլսոնն իր «Տարբերակված դասարան., 2-րդ հրատարակություն»* գրքում ներկայացնում է մի քանի փաստեր և վկայություններ տարբերակված դասավանդման մեջ հաջողություններ գրանցած մի շարք ուսուցիչների մշակված ռազմավարությունների և ոճերի վերաբերյալ: Ուզում եմ առանձնացնել տիկին Սանթոսին: Տիկին Սանթոսը խմբերին տրամադրում է ինտերնետային ռեսուրսներ , առանձին ընթերցանության նյութեր: Նա աշխատում է ինչպես խմբերի հետ , այնպես էլ առանձին սովորողների հետ , միշտ փորձում է

հասկանալ սովորողներին , մղում է նրանց միասին աշխատելով բարձրաձայնել, քննարկել , առաջադրել ծագած հարցեր , ինչպես նաև տալ լուծումներ: Տիկին Սանթոսի մոտ ավելի լավ է ստացվում , երբ նա կատարում է միջավայրի ընտրություն՝ օգտագործում է տարածքը, շրջակա միջավայրի տարրերը , ներառյալ լուսավորությունը, ինչպես նաև դասարանի ընդհանուր մթնոլորտը: Ուսուցիչի նպատակն է ստեղծել միջավայր, որը դրական է, կառուցողական և աջակցող յուրաքանչյուր աշակերտի համար: *ֆոնային փորձի լայն զանգված ունեցող երեխաները աճում են այնքան, որքան հնարավոր է՝ ամեն օր, ամեն շաբաթ եւ ամեն տարի:*

Գործընթացի վերջում հասնում ենք վերջնարդյունքին , որն արդեն սովորողի *արտադրած ապրանքն* է բովանդակության տիրապետման համար՝ թեստեր, գնահատումներ, ծրագրեր, հաշվետվություններ կամ այլ գործողություններ: Այսպիսով հասա ինձ համար կարևոր և պատասխանատու գործընթացի՝գնահատում : Անն Թոմլինսոնի ուսումնասիրություններն այդ առումով բավականին կիրառելի է :

Նախնական գնահատականները կարող են տեղեկություններ հավաքել յուրաքանչյուր սովորողի ուժեղ կողմերի, հարմարավետության կամ թուլության ոլորտների մասին/ Անն Թոմլինսոն 2007, Դիլան Ուիլյամ Ջեֆ Փեթթի և այլոք/ : Սա հանգեցնում է համապատասխան տարբերակման, որը ներառում է յուրաքանչյուր աշակերտի ուսուցման կարիքները և նախասիրությունները: Գնահատումները պետք է օգտագործվեն որպես հստակ եւ իմաստալից ուղեցույց ստեղծելու գործիք, որն առաջնորդում է յուրաքանչյուր աշակերտի մարտահրավերները : Ինձ մոտ լավ է ստացվում ընթացիք գնահատումը, որը բազմիցս արդեն կիրառում եմ :Այն ինձ օգնում է ճանաչել սովորողներին և իմանալ նրանց կարիքները, ընտրել ռազմավարություններ եւ միջամտություններ, որոնք առավելագույնս բարձրացնում են սովորողի նվաճումը: Կարևորություն եմ տալիս նաև ձևավորող և հայտորոշիչ գնահատումներին :Այն օգնում է բարձրացնել սովորողի ինքնագնահատականը , վերահսկել իմացածը , օգտագործել հետադարձ կապեր ,կատարել մշտադիտարկում: ձևավորող և հայտորոշիչ գնահատումն օգնում է աշակերտներին ու ծնողներին օգտագործել իրենց գնահատականները, արտացոլելու եւ հասկանալու իրենց սեփական նախընտրությունները և ձեռքբերման մակարդակը և իհարկե կողմնորոշվելը հետագա անելիքների հարցում /*Tomlinson,CarolAnn,(1999)/:*

Գնահատումն օգնում է ուսուցչին հասկանալու, թե ուսումնառության որ կետում է գտնվում աշակերտը , այդ իսկ պատճառով տարբերակումը և գնահատումը խիստ փոխկապակցված գործընթացներ են: Տարբերակումը ռազմավարությունների համակարգ է, որի նպատակն է համոզվել, որ յուրաքանչյուր աշակերտ դասից հեռանում է ուսումնառության մեջ մի քայլ առաջ անցած. գիտի ավելին, ավելի խորն է ընկալում, վստահաբար կիրառում է հմտությունները և ուզում է սովորել ավելին/ Լիզ Բիլզ և Վալ Բրուկս/:

Ուսումնասիրելով Լիզ Բիլզ և Վալ Բրուկս «Տարբերակման կիրառումն ուսումնառության խթանման համար» հոդվածը իմ հետազոտական աշխատանքի համար աձանցքային հանդիսացան հետևյալ կետերը.

- Կրթական տարբերությունները
- Հոգեբանական տարբերություններ
- Ուսումնառության ոճի տարբերությունները

▪ Սոցիալական, մշակութային և գենդերային տարբերություններ
▪ Հատուկ կարիքներ

Հոդվածի վերաբերյալ կատարել եմ անդրադարձ , որտեղ կանգ եմ առել երեք հիմնական հարացույցների վրա՝ 1. Սովորողների միջև տարբերությունները:

2. Տարբերակում և պլանավորում ,տարբերակման ռազմավարություն:

3. Տարբերակումը դասարանից դուրս:

Ինչպես նշել եմ իմ՝ հոդվածին արված անդրադարձի մեջ տարբերակված ուսուցում իրականացնելու համար պետք է հաշվի առնել երեք կարևոր հարացույցներ՝

▪Բիհեյվորիզմ
▪Ճանաչողական տեսություն
▪Փոխազդեցության տեսություն

Իմ հետազոտական աշխատանքը կատարեցի հաշվի առնելով վերը նշված կետերը : Ուզում եմ հավելել. ինձ համար ուղեցույց հանդիսացավ հոդվածում արծարծվող *բովանդակության տրոհման և աշխատանքն իրականացնելու միջնաժամկետ* և առանձին դասերի *կարճաժամկետ* պլանավորման գաղափարը: Այն , որ տարբերակման որոշ հայեցակետեր հնարավոր է լավագույնս պլանավորել *միջնաժամկետ* կտրվածքով: Տարբերակված ուսուցումը արդյունավետ կլինի կիրառելով Վիգոտսկու *«Մերձակա զոտիների* տեսությունը»: Առանձին դասերի համար նպատակներ սահմանելիս կարևոր է նաև հստակեցնել բովանդակության հետ աշխատանքի երկարաժամկետ նպատակները՝ տարբերակելով բոլոր աշակերտների համար նախատեսված բուն գիտելիքը, հմտություններն ու հասկացությունները, աշակերտների մեծ մասի կողմից յուրացվելիք լրացուցիչ նյութը և որոշ սովորողներին հասանելի խորացված գաղափարներն ու հմտությունները: Սովորողների մոտ առկա է հոգեբանական ,սոցիալական , գենդերային տարբերակումներ :Այս ամենի հետ նշեմ , որ կան հատուկ կարիքներ ունեցող աշակերտներ : Հարկավոր է ստեղծել տարբերակված նպատակների համակարգ , որը կազմվի հետևյալ հարցադրումների հիման վրա:

• Բոլոր աշակերտները պետք է. . .
• Աշակերտների մեծ մասը հարկ է, որ. . .
• Որոշ աշակերտներ կարող են. . .

Աշակերտները կամաց-կամաց պետք է հենվեն այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են երևույթը, պատճառը, հետևանքը, պայմանականությունը, տարբերակումը և այլն:Այս իմացությունները մեծ դեր են կատարում վերացական մտածողության ձևավորմանը / В.А. Сухомлинский /: Հետազոտական աշխատանքս կատարելիս, ինչպես նաև նպատակային , արդյունավետ ուսուցում իրականացնելու համար, ինձ համար գործիքներ հանդիսացան բոլոր հոդվածները և դրանց անդրադարձները : Տարբերակված ուսուցմանը խիստ նպաստում է

Թվային տեխնոլոգիաները և ստեղծագործականությունը
Թվային և տեղեկատվական տեխնոլոգիաները
Վկայությունները
Մոտիվացիան
Վերլուծական դասավանդումը

Թվային տեխնոլոգիաները և ստեղծագործականությունը տարբերակված ուսուցման գործընթացում:

Գիտության ամեն մի առաջընթացը խիստ կապված է տեխնիկայի զարգացման հետ: Տեխնիկայի զարգացումը և օգտագործումը միշտ ունեցել է դրական և կարևոր ազդեցություն գիտության շատ ու շատ ասպարեզներում : Թվային և տեղեկատվական տեխնոլոգիաները կարևոր դեր են կատարում ուսումնառությունն առավեգույնի հասցնելու գործում: Ուսումնառության զարգացման գործում կարևոր տեղ ունի նաև ստեղծագործականությունը: Այն առաջացնում է մոտիվացիայի աճ և բերում հաջողություններ գիտության ցանկացած բնագավառներում:

Ուզում եմ ավելացնել , որ տարբերակված ուսուցման գործընթացը լիարժեք չի լինի, եթե չկան տեղեկատվական տեխնոլոգիաներ և մարդկային ստեղծագոծականություն: Թվային տեխնոլոգիաների միջոցով ըստ վիգոտսկու կարելի է միմյանց հետ փոխազդել այսպես ասած մերձակա գոտիների զարգացման միջոցով, ընդարձակել անհատի ճանաչողական ռեսուրսները:Այդ առումով աշակերտը ձեռք է բերում ինքնուրույնություն, նա կարողանում է օրինակ ինքնուրույն հավաքել տեքստ, ստեղծել դասին վերաբերող խաղեր՝ հատկապես հարմար է գրականության դասերի համար, պատրաստել գեղեցիկ և հագեցած սահիկներ, օգտվել օնլայն շատ աղբյուրներից և կիրառել դրանք իր աշխատանքներում: Այդ նույն աշխատանքը ուսուցչի համապատասխան հանձնարարականով կարելի է կատարել համագործակցելով ընկերների հետ: Որպես ճանաչողական աշակերտության մեթոդներ նաև կարող են լինել ուսուցչի կողմից մշակված հարցերը, որոնք որպես տնային աշխատանք կտրվեն և կստուգվեն էլ. փոստով, կամ էլ Գուգլ ֆորմսով, Քուիզիսով և այլն:Այս ամենը հետզհետե կբերի ինտերակտիվ դասավանդմանը, որը, ճիշտ է, նոր մեթոդ է, սակայն հեռանկարային է և ուսումնառությանը նպաստող:

Թվային տեխնոլոգիաների միջոցով կարող ենք իրականացնել ուսումնառության բոլոր գործընթացները:

Մարդը լինելով ստեղծագործության արդյունք, ինքը նույնպես ստեղծագործող է:

Իմ հետազոտության թեման վերաբերում է տարբերակված ուսուցմանը : Այդ առիթով դասապրոցեսի ընթացքում առավել շեշտը դնում եմ զարգացման կարիք ունեցող սովորողների վրա: Եթե չունենաս ստեղծագործական ջիղ, ոճ , ապա չես կարող

մոտիվացնել նման սովորողներին: Դասավանդման ընթացքում բացահայտել եմ ստեղծագործող աշակերտների, որոնց մասին նշել եմ անդրադարձի մեջ:

Ստեղծագործականությունը առաջացնում է մոտիվացիայի աճ և բերում հաջողություններ գիտության ցանկացած բնագավառներում : Ստեղծագործել կարող են բոլորը , թեպետ տաղանդ ունեն ոչ բոլորը: Հարկավոր է ինչպես ստեղծագործականությամբ իրագործել ուսումնառությունը ,այնպես էլ ուսումնառությունը մղել դեպի ստեղծագործականության:




ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՔԵԼ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՕԳՏՎԵԼ ՏՀՏ- ԻՑ
ԿՈԼԵԳԱՆԵՐԻՑ
ԱՅԼ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ

ՄՈՏԻՎԱՑԻԱ

Դասն անցկացնելով ոչ ուսուցչակենտրոն ձևով՝ հնարավորություն եմ տալիս աշակերտին ինքնուրույնություն ցուցաբերել, որի արդյունքում իսկապես արձանագրում եմ հաջողություններ: Ես հնարավորություն եմ տալիս սովորողներին ընտրել անհատական թիրախներ , օրինակ տվյալ դասը ներկայացնել սեփական օրինակներով և բացատրել դրա հետ կապված և' կանոնները, և' կիրառությունը: Հնարավորություն եմ տալիս աշակերտներին կատարել եզրահանգումներ, գտնել թերություններ և կատարել շտկումներ: Այդ թիրախները հաղթահարելու համար խրախուսում եմ աշակերտներին : Զգում եմ նրանց մոտ գրանցված մոտիվացիայի աճ , պրպտում, ինքնավստահություն, սեր և հետաքրքրություն առարկայի նկատմամբ (դա ակնհայտ է հատկապես «ալարկոտ» աշակերտների մոտ):
Առանձնացրել էի հետևյալ կետերը ,որոնք էլ կիրառեցի հետազոտական աշխատանքի ընթացքում:

Սովորողի հետաքրքրվածությունը բարձրացնելու մի քանի եղանակ.
- **Հետաքրքրությո՛ւն ցուցաբերեք ինքներդ. խանդավա'ռ եղեք:**
- **Կենտրոնացե'ք հետաքրքրաշարժ հարցերի, ոչ թե զուտ փաստերի հաղորդման վրա:**
- **Ցու'յց տվեք ձեր դասավանդածի և իրական աշխարհի միջև կապը: Օգտագործե'ք իրական առարկաներ, ցուցադրե'ք գործնական տեսահոլովակներ, այցելություննե՛ր կատարեք, այցելունե՛ր հրավիրեք և այլն:**
- **Գործի' դրեք սովորողի ստեղծագործականությունն ու ինքնաարտահայտման կարողությունը:**
- **Համոզվե'ք, որ սովորողները ակտիվ են:**
- **Պարբերաբար փոփոխե'ք ուսումնական աշխատանքները:**
- **Մատուցե'ք անակնկալներ և կիրառե'ք նոր աշխատանքներ:**
- **Կազմակերպե'ք խմբային մրցույթներ:**
- **Ուսումնառությունն ուղղակիորեն կապե'ք սովորողների կյանքին:**



Վերլուծական դասավանդման դերը տարբերակված ուսուցման գործընթացում:

Վերլուծություններով համալրված փորձությունը հնարավորություն է տալիս տեսնել սեփական թերություններն ու շտկել դրանք:Վերլուծական դասավանդման շրջափուլային գործընթացում ուսուցիչը շարունակաբար մշտադիտարկում, գնահատում և վերանայում է սեփական փորձությունները:Այն օգնում է և՛ ուսուցչին, և՛ սովորողին՝ ինքնահաստատվել: Վերլուծական դասավանդումը հնարավորություն է տալիս դասն անցկացնել անկաշկանդ, նպատակաուղղված, ստեղծագործաբար, առողջ դինամիկայով: Օգնում է ուսուցչին զարգացնել իր հմտություններն ու կարողությունները:Եվ վերջապես օգնում է մշակել օրինակելի դասի պլան, որով կարելի է դնել հստակ նպատակ և հասնել վերջնարդյունքին:

Վերլուծական դասավանդման արդյունքում ուսուցիչը սովորողների մոտ զարգացնում է.

- Քննադատական և վերլուծական ունակություններ
- Պատճառահետևանքային կապերի կառուցման, փաստարկման հմտություններ
- Խնդրի շուրջ կենտրոնանալու ունակություն
- Հետազոտելու կարողություն
- Թիմում աշխատելու կարողություններ

Վերլուծական դասավանդման շնորհիվ կարող ենք իրագործել Բլումի տաքսոնոմիան, ըստ որի կձևավորենք ճանաչողական գործընթաց՝ պարզունակ հիշողությունից մինչև բարձր ստեղծագործական և քննադատական մտածողություն: */Անդրյու Փոլարդ և Անդերսոն, Մանդի Մարոֆ, Սյու Սվաֆիլդ, Յո Ուարին, Փոլ Ուարվի/*



ԻՆՉՊԵՍ Է ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՒՄ Հայոց լեզու ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆՄԱՆԸ

Գիտության և տեխնիկայի այս բուռն զարգացման ժամանակաշրջանում հաճախ եմ լսում հետևյալ արտահայտությունները.

-Չեմ սիրել այդ առարկան:
-Գիտեմ , որ հետաքրքիր առարկա է,սակայն ոչինչ չեմ հասկացել:
- Մեր հայոց լեզվի ուսուցիչը ոչինչ չէր անում :
-Շատ հեռու եմ քերականությունից :
-Շատ դժվար մասնագիտություն եք ընտրել:
-Մեր ինչի՞ն է պետք այդ առարկան ,ինչու՞ են պարտադրում:

Նման հարցերը բնականաբար մտահոգիչ են և պահանջում են ելքեր: Հետևելով ավանդական կրթահամակարգին՝ դժվար թե հաջողություններ գրանցվեն ուսումնառության ասպարեզում, իսկ տարբերակված ուսուցումը տալիս է իր դրական արդյունքները :Վերը նշված իմ քննարկումները լիովին նպաստում են հայոց լեզու և գրականություն առարկաների արդյունավետ ուսուցմանը: էֆեկտիվ դասավանդման համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ հիմնակետերը, որոնք բխում են հումանիստական սկզբունքներից.

- ազատություն
- ինքնուրույնություն
- համագործակցում

Հայոց լեզվի և գրականության դասավանդման տարբերակված ուսուցման արդյունքները գրանցեցի՝ օգտվելով այն աղյուսակից ,որն առաջարկվում է /В.И.Рыжкова2003/ :
Նպատակներիս հասնելու համար իմ առջև դրեցի հետևյալ հարցադրումները՝

- Ինչպե՞ս սովորեցնել:
- ինչպե՞ս հետաքրքրություն առաջացնեմ առարկանորի նկատմամբ , որպեսզի դրանք դառնան նրանց կյանքի մի մասը:
- Ինչպե՞ս կազմակերպեմ ուսուցումը, որպեսզի այն միապաղաղ և ձանձրալի չլինի:



ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Ներածություն

Ես միշտ սրտացավորեն և մեծ պատասխանատվությամբ եմ աշխատել: Արդյունքում գրանցել եմ հաջողություններ , սակայն միաժամանակ ունեցել եմ դժվարություններ : Դասարաններ կային , որտեղ շատ լավ էր ստացվում ուսուցումը , դասարաններ էլ կային , որտեղ հաջողություններ չէի գրանցում, այդ պատճառով ընկճվում էի, հայտնվում անձուկ վիճակում: Դասարանում կան խնդիրներ՝ վարքային, ներառական , մտավոր, տղաների քանակը շատ է, անցումային շրջանում են: Թիրախներս ու ռազմավարություններս ընտրեցի հիմնականում այդ դասարանի համար, որի համար ինձ քաջալերեցին և աջակից եղան գործընկերներս , այն հոդվածներն ու հետազոտական աշխատանքները , որոնք քննարկվեցին և ուսումնասիրվեցին մոր կողմից: Ես հասկացա և ընկալեցի այն մարտահրավերները , որոնք ինձ կմղեին արդյունավետ ուսուցման , կտային ինձ դասավանդման նոր տեխնիկա և ոճեր , կզարգացնեին ինձ, ուստի որոշեցի հետազոտությունս կատարել և 7 րդ, դասարանի աշակերտների հետ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Դասարան մտնելու առաջին իսկ օրվանից պետք է բացահայտել բոլոր աշակերտներին: Տարիների ընթացքում ձեռք բերված փորձը և հոգեբանական կարողություններն օգնում են արագ ճանաչել աշակերտներին : Ամեն անգամ 7-րդ դասարան վերցնելիս տարբեր հարցադրումներով , օրինակներով , փորձերով սկսում եմ ծանոթանալ սովորողներին, նրանց կարողություններին, տրամաբանությանը , ճանաչողությանը: Կամաց կամաց ընտրում եմ թիրախներս , մշակում եմ ռազմավարություններ արդյունավետ աշխատելու համար : Այս տարի առավել տրամադրված և ոգևորությամբ սկսեցի իմ աշխատանքը . ունեի դասավանդման մեթոդների վերաբերյալ նոր մոտեցումներ և ուզում էի կիրառել դրանք:

Դասապրոցեսը պետք է կազմակերպվի այնպես , որ այն չհոգնեցնի ու չձանձրացնի աշակերտին , դառնա նրա խաղի , հանգստի մի մասը : Դա տարբերակված ուսուցմանը շատ է նպաստում և բավականին դրական արդյունքներ է գրանցում:

Սկսեցի նախնական տվյալներ հավաքել սովորողների մասին՝թե՛ նրանց վարքագծի , թե՛ ուսումնական առաջընթացի , թե՛ ընտանիքների վերաբերյալ : Դրա հետ միաժամանակ դասի ընթացքում հարցադրումների , առանձին հանձնարարությունների միջոցով սկսեցի ճանաչել աշակերտներին և կազմել իմ կարծիքները նրանց մասին: Թվում էր, թե նրանց չի հետաքրքրում առարկան , սակայն հետզհետե կապվեցին դասին և իրենց հենց միջոցով դասը դարձավ հետաքրքիր և ուսանելի:

Ուղղորդվելով Գարների ***«Կրթական համակարգի գերագույն նպատակը սեփական ուսումնառության բեռը անհատի ուսերին դնելն է»***/ Gardner, Howard,1999 / կարգախոսից ,

Ես սկսեցի քիչ բեռ վերցնել ինձ վրա , տիկին Սանթոսի նման աշխատեցնել աշակերտներին, Խմբային աշխատանքներ հանձնարարել դասից դուրս , հնարավորություն տալ համայնքների աշխատանքի զարգացմանը: Այս գործընթացը տվեց իր պտուղները .Նախ 7 –րդ դասարանում լուծվեց վարքային խնդիրը , աշակերտները քիչ -քիչ ներգրավվեցին դասապրոցեսին: Քանի որ 7-րդ դասարանը մեծաթիվ է , խմբային աշխատանքը այդքան էլ հարմար չէ , դասն անցկացնում եմ հարցադրումների մեթոդով՝ նախօրոք մշակված հարցաթերթիկների միջոցով և անհատական տնային աշխատանքներ հանձնարարելով: Դրանով կարողանում եմ դասին ընդգրկել մեծամասնությանը և գնահատում կատարել :Նշեմ նաև ,որ ակնկալում եմ ծնողների և տնօրինության աջակցությունը, որը 7-րդ դասարանում բավականին հաջողվում է:

Հետազոտական աշխատանքը իրականացրեցի 6 տարբերակված ուսուցման դասաժամերով ՝ըստ գծապատկերի.



Դասարանում տարբերակված ուսուցման նպատակով հետազոտական աշխատանքի մեջ ուշադրությունս սևեռեցի ուսումնառության արդյունավետություն ցուցաբերելու աստիճանի բարձր, միջին , ցածր առաջադիմության որոշակի աշակերտների : Ընտրել եմ տարբեր ռազմավարություններ՝ անհատական աշխատանքներ , առանձին հարցումներ , անհատական հարցաթերթիկներ:

Հետադարձ կապերի միջոցով կատարեցի նշումներ աշակերտների ուսումնառության վերաբերյալ՝ մինչև տարբերակված ուսուցման մեթոդով դասավանդելը և դրանից հետո: Սկզբնական շրջանում փոփոխություններն էական չէին ,սակայն գնալով , արձանագրում էի էական աճ , հատկապես ցածր առաջադիմություն գրանցող սովորողների մոտ:

Մի պահ առաջադիմության և հետաքրքրության անկման տենդենց գրանցվեց տարբեր մակարդակների որոշ աշակերտների մոտ:Ես սկսեցի անհանգստանալ, մշակեցի նոր ռազմավարություններ , ընտրեցի նոր թիրախներ : Արդյունքում արձանագրում եմ բավականին լավ ուսումնառության արդյունքներ , որն ինձ ավելի ոգևորում է և նոր պրպտումների ու մեթոդների յուրացման մղում:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒԹ Յ ՈՒ Ն

Դասարանում տարբերակված ուսուցման նպատակով հետազոտական աշխատանքի մեջ ուշադրությունս սևեռեցի ուսումնառության արդյունավետություն ցուցաբերելու աստիճանի բարձր՝, միջին՝, ցածր՝ առաջադիմության որոշակի աշակերտների: Ընտրել եմ տարբեր ռազմավարություններ՝ անհատական աշխատանքներ , առանձին հարցումներ , անհատական հարցաթերթիկներ:

ՀԿ –ի միջոցով կատարեցի նշումներ աշակերտների ուսումնառության վերաբերյալ մինչև տարբերակված ուսուցման մեթոդով դասավանդելը և դրանից հետո: Սկզբնական շրջանում փոփոխություններն էական չէին ,սակայն գնալով , արձանագրում էի էական աճ ,հատկապես ցածր առաջադիմություն գրանցող սովորողների մոտ:

7-րդ դասարանում արդյունավետության ցուցանիշը բարձրացավ , որն էլ հենց ակնկալում էի , բայց չէի հավատում: Մի պահ 7 րդ դասարանում առաջադիմության և հետաքրքրության անկման տենդենց գրանցվեց տարբեր մակարդակների որոշ աշակերտների մոտ: Ես մի փոքր անհանգստացա, սակայն գործընկերներիս աջակցությունն ինձ անմիջապես ուղղորդեց մշակել նոր ռազմավարություններ , ընտրել նոր թիրախներ : Արդյունքում արձանագրում եմ բավականին լավ ուսումնառության արդյունքներ , որն ինձ ավելի ոգևորում է և նոր պրպտումների ու մեթոդների յուրացման մղում:

Ունեմ բավականին շտկումների կարիք:

Եթե այս գործընթացի ժամանակ ես հաջողություններ եմ գրանցել ,ապա հանձինս այն մեծ թիմի ,որ մշտապես կանգնած է եղել իմ կողքին :

- Այս հետազոտության ընթացքում ես համոզվեցի, որ տարբերակված, անհատական ուսուցումը թեպետ բավականին բարդ , աշխատատար գործընթաց է ,այնուամենայնիվ տալիս է իր առողջ պտուղները:
- Տարբերակված ուսուցումը մոտիվացնում է ուսուցչին աշակերտի հետ միասին : ինձ համար սկզբնական շրջանում շատ դժվար էր ընկալել այն ռազմավարությունը ,որ բեռը պետք է դնել սովորողի վրա , ոչ թե ուսուցչի :
  Հետազոտական աշխատանքս ապացուցեց ,որ իսկապես աշակերտները միմյանց հետ հաղորդակցվելով ավելի լավ են նյութը յուրացնում , քան ավանդական ուսուցմամբ:
  - Տարբերակված ուսուցման արդյունքում երեխաները աճում են այնքան, որքան հնարավոր է՝ ամեն օր, ամեն շաբաթ եւ ամեն տարի:
  - Շատ կարևոր է տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսին , հատկապես հետաքրքիր և ուսանելի է դասն ամրացնել սահիկաշարի օգնությամբ, ինտերակտիվ գրատախտակի միջոցով և այլն :

- Անհատական մոտեցումն , ըստ երևույթին, ուսուցչական դերի ամենաբարդ ոլորտներից է , և լուրջ վերաբերմունքի պարագայում մարտահրավերների տեղիք է տալու ուսուցչի ողջ կարիերայի ընթացքում:
- Հարցադրումների , անհատական հարցաթերթիկների , թեստային առաջադրանքների , միջոցով չափել եմ նրանց կարողություններն ու հմտությունները հայոց լեզվի և գրականության, հարակից առարկաների վերաբերյալ մինչև տարբերակված ուսուցումը և դրանից հետո:
- Անհատական տարբերություններին արձագանքելն, ըստ երևույթին, ուսուցչական դերի ամենաբարդ ոլորտներից է , և լուրջ վերաբերմունքի պարագայում մարտահրավերների տեղիք է տալու ուսուցչի ողջ կարիերայի ընթացքում:
- Տարբերակված ուսուցումը կիրառում է այնպիսի ռազմավարություն, որ գիտելիքը դառնում է փոխանցելի : Տարբերակված և անհատականացված ուսուցումը կարծես այսօր ավելի կարևոր է, քան երբևէ :

. Ամբողջ հետազոտական աշխատանքի ընթացքում ուղղորդվել եմ հետևյալ խոսքերով

«... Յուրաքանչյուր ուսուցիչ շատ լավ է հասկանում , որ երբեք հետ չի ուղարկվում ոչ մի հապալասի հատիկ» :

«... Մենք վերցնում ենք և՛ հարուստներին, և՛ աղքատներին, և՛ տաղանդավորներին, և՛ բացառիկներին, և ՛ վախեցածներին: Մենք վերցնում ենք բոլորին, նրանցից յուրաքանչյուրը կարևոր է մեզ համար: Եվ այդ է պատճառը, որ սա բիզնես չէ: Սա դպրոց է»:

Այս հետազոտությունն իրականացնելիս եկա այն եզրահանգման ,որ

«Երբեք չի պակասել սերը ուսման նկատմամբ» :

«Միակ բանը, որ տարբերակում չպիտի ճանաչի , ուսուցչի սերն է աշակերտների նկատմամբ»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- *Լեւի, Հ.Մ. (2008): «Ընդհանուր առմամբ ուսանողների բոլոր կարիքները բավարարել տարբերակված ուսուցման միջոցով. Օգնել յուրաքանչյուր երեխայի հասնել եւ գերազանցել ստանդարտները»: Հաշվարկային տանը : 81 (4): 161-164:*
- Լիզ Բիլզ և Վալ Բրուկս «Տարբերակման կիրառումն ուսումնառության խթանման համար»
- «101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար» Խմբագիրներ՝ Ադամ Մերենյի, Վինցե Սաբո, Աթիլլա Տակաչ /համացանց/
- Арганы Н.Ф. Мир физики: Учебное пособие. – Усть-Илимск: ПУ № 42, 2003. – 103 с.
- В.А. Сухомлинский. Родительская педагогика *https://mel.fm/pedagogika/4961578-sukhomlynsky* СУХОМЛИНСКИЙ 100 СОВЕТОВ УЧИТЕЛЮ
- Рыжкова В.И. Дифференциация обечения как важный фактор развития познавательного интереса школьников // Завуч, 2003. № 8. С. 58-63.
- Якиманская И.С. Психолого-педагогические проблемы дифференцированного обучения // Советская педагогика, 1991. № 4. С. 44-52.
- Dylan William “What is Assessment for Learning”. Dylan Wiliam “Using Minute-by-Minute and Day-to-Day Assessments”
- Gardner, Howard (1999) *The Disciplined Mind: Beyond Facts And Standardized Tests, K-12*
- HANI MORGAN Multiple Intelligences and Differentiated Instruction 2014
- PAUL D. ELLISThe Essential Guide to Effect Sizes: Statistical Power, Meta-Analysis
- PAUL D, A. (2005). *Reflective Teaching* (3rd Ed.)
- Petty, G. (2006) *Evidence Based Teaching*, Cheltenham: Nelson Thornes.
- Petty, G. (2002). 25 Ways for Teaching without Talking. In “Presenting Students with New Material in Theory Lessons”.
- Petty, G. (2009). Teaching Today. CH 14: “Questioning”.

- *Tomlinson, Carol Ann (1999): «Տարբերակված ուսուցման ուղիների քարտեզագրում»: Կրթական առաջնորդություն :*

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն